ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք, հասցե՝ Կոտայքի մարզ,գյուղ Քաղսի 6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս՝ 077-077-250, էլ. Փոստ՝ qaxsi.kotayk@mail.ru

16.09. 2016թ.

N 031-149

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գուլոյան

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի, Ձեզ է ուղարկվում Կոտայքի մարզի Քաղսի համայնքի ավագանու 2016թ. սեպտեմբերի 15-ի թիվ 9 նիստի որոշումները:

Առդիր 3 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Քաղսի համայնք, հասցե՝Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի
6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս՝ 077-077-250, էլ. Փոստ՝qaxsi.kotayk@mail.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«15» սեպտեմբերի 2016թվականի N36 -Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով,

համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել Քաղսի համայնքի ավագանու 2016թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 9 նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը օտարելու մասին.
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 23-ի N71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

*Կողմ* 5 *Դեմ* 0 *Ձեռնպահ* 0

*Ավագանու անդամներ՝*

1. Գրիգորյան Մանվել
2. Դավթյան Գևորգ
3. Ենոքյան Էդիկ
4. Պետրոսյան Օնիկ
5. Խուրշուդյան Գևորգ

Համայնքի ղեկավար՝ Ս.Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Քաղսի համայնք, հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի
6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս՝ 077-077-250, էլ. Փոստ՝ qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ու Մ

**«15» սեպտեմբերի 2016թվականի** N37 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով.

համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Թույլատրել Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի արոտավայրերի 07-063-0219-0010 ծածկագրի 1,3000 հա հողամասը օտարել աճուրդով՝ մեկնարկային գինը սահմանելով համապատասխան հողատեսքի կադաստրային արժեքի 100%-ի չափով, որը կազմում է 139.750 դրամ:

*Կողմ* 1 *Դեմ* 2 *Ձեռնպահ* 2

*Ավագանու անդամներ՝*

_______ 1. Գրիգորյան Մանվել

_______ 2. Դավթյան Գևորգ

_______ 3. Ենոքյան Էդիկ

_______ 4. Պետրոսյան Օնիկ

_______ 5. Խուրշուդյան Գևորգ

Համայնքի ղեկավար՝ Ս.Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Քաղսի համայնք, հասցե՝Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի
6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս՝ 077-077-250, էլ. Փոստ՝qaxsi.kotayk@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

**«15» սեպտեմբերի 2016թվականի** N38 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով,
համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի 2016թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին» N71-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 11.1.2.51 ծրագրի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 4891-«Պահուստային միջոցներ» ենթաանալիտիկ հաշվի «960.000» թվերը փոխարինել «600.000» թվերով
2. 01.1.1.51 ծրագրի 4212-«Էներգետիկ ծառայություններ» ենթաանալիտիկ հաշվի «961.650» թվերը փոխարինել «1061.650» թվերով.
3. 08.2.4.51 ծրագրի 4212-« Էներգետիկ ծառայություններ» ենթաանալիտիկ հաշվի «400.000» թվերը փոխարինել «500.000» թվերով.
4. 07.2.1.55 ծրագրի 5112-« Շենքերի և շինությունների կառուցում» ենթաանալիտիկ հաշվի «600.000» թվերը փոխարինել «760.000» թվերով:

*Կողմ* **5** *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

*Ավագանու անդամներ՝*

1. Գրիգորյան Մանվել
2. Դավթյան Գևորգ
3. Ենոքյան Էդիկ
4. Պետրոսյան Օնիկ
5. Խուրշուդյան Գևորգ

Համայնքի ղեկավար՝ Ս.Ալեքսանյան